ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 12

14 հոկտեմբերի 2026 թվական

ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

գ. Փամբակ Ավագանու նստավայր

Նիստը վարում էր համայնքի ղեկավար, ավագանու անդամ Սուրեն Կոստանդյանը:

Մասնակցում էին՝

«Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության ավագանու խմբակցության անդամներ՝ Սուրեն Կոստանդյանը, Սամվել Անանյանը, Գրիգոր Կարապետյանը, Շուշանիկ Հակոբյանը, Արայիկ Քոչարյանը, Էմմա Գասպարյանը, Պավլիկ Պապինյանը, Աշոտ Անտինյանը, Սերյոժա Սարդարյանը և Ալվարդ Ավետիքյանը:

«Բարգավաճ Հայաստան» կուսակցության ավագանու խմբակցության անդամ՝ Սերյոժա Եսայանը:

Նիստից բացակայում էին՝

«Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության ավագանու խմբակցության անդամ՝ Արշակ Սրապյանը:

«Բարգավաճ Հայաստան» կուսակցության ավագանու խմբակցության անդամներ՝ Նաիրա Հարությունյանը, Սասուն Մարանդյանը և Սևակ Խաչատրյանը:

Նիստն իրավազոր է՝ նիստին ներկա են ավագանու 11 անդամ

ՆԻՍՏԸ - Նիստը վարող Սուրեն Կոստանդյանը ժամը 14.00-ին նիստը հայտարարեց բացված: Նա ողջունեց ներկաներին և առաջարկեց իր նախաձեռնությամբ օրակարգի 5-րդ կետում՝ «Փամբակ համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերը վարձակալության իրավունքներով տրամադրելուն համաձայնություն տալու, մեկնարկային գները, մրցույթի պայմանները հաստատելու մասին» որոշման նախագծում ավելացնել 3 լոտ, 6-րդ կետում՝ «Փամբակ համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերն աճուրդ վաճառքով օտարելուն համաձայնություն տալու, մեկնարկային գները և աճուրդի պայմանները հաստատելու մասին» որոշման նախագծից հանել 1 լոտ, ինչպես նաև օրակարգի մեջ ներառել և քվեարկել որպես 15-րդ հարց և որոշման նախագիծ հետևյալ բովանդակությամբ.

15. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնքի սեփականության գույքագրման փաստաթղթերում կատարված փոփոխությունները հաստատելու մասին:
զեկ. Կ. Շերմազանյան

Ս. Կոստանդյանը առաջարկեց քվեարկել օրակարգի 5-րդ և 6-րդ կետերում փոփոխություններ կատարելու, ինչպես նաև օրակարգում 15-րդ հարց ընդգրկելու համար:
Քվեարկությամբ, կողմ՝ 11 ձայների համաձայնությամբ օրակարգում կատարվեց փոփոխություն:

Նիստ վարողն առաջարկեց հաստատել օրակարգը՝ ավելացված որոշման նախագծով:
Քվեարկությամբ, կողմ՝ 11, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0, ընդունվեց որոշում /կցվում է որոշում N 166-Ա/:

Հաստատվեց օրակարգը, ինչով էլ սպառվեց ներկայացված օրակարգի առաջին հարցը.
Հաստատված օրակարգը՝

1. ՀՀ Լոռու մարզի Փամբակ համայնքի ավագանու 2026թ-ի հոկտեմբերի 14-ի թիվ 12 հերթական նիստի օրակարգը հաստատելու մասին:
զեկ. Ս. Կոստանդյան

2. ՀՀ Լոռու մարզի Փամբակ համայնքի ավագանու 2025 թվականի դեկտեմբերի 23-ի թիվ 142-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:
զեկ. Կ. Շերմազանյան

3. ՀՀ Լոռու մարզի Փամբակ համայնքի բյուջեի կատարման 2026թ-ի III եռամսյակի կատարած ֆինանսական հաշվետվության մասին:
զեկ. Կ. Շերմազանյան

4. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակի համայնքապետարանի աշխատակազմի կառուցվածքը, համայնքապետարանի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին:
զեկ. Ռ. Մինասյան

5. Փամբակ համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերը վարձակալության իրավունքներով տրամադրելուն համաձայնություն տալու, մեկնարկային գները, մրցույթի պայմանները հաստատելու մասին:
զեկ. Ա. Օհանյան

6. Փամբակ համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերն աճուրդ վաճառքով օտարելուն համաձայնություն տալու, մեկնարկային գները և աճուրդի պայմանները հաստատելու մասին:
զեկ. Ա. Օհանյան

7. Համայնքային սեփականություն հանդիսացող Փամբակ համայնքի գյուղ Մարգահովիտ 3-րդ փողոց 32 բաղնիք հասցեում գտնվող անշարժ գույքը վարձակալության իրավունքով տրամադրելու մասին:
զեկ. Ա. Օհանյան

8. Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասն ուղղակի վաճառքով, ընդլայնման նպատակով Աշոտ Վասիլի Թունյանին օտարելու մասին:
զեկ. Ա. Օհանյան

9. Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասն ուղղակի վաճառքով, ընդլայնման նպատակով Հայկազ Սամսոնի Ներկարարյանին օտարելու մասին:

զեկ. Ա. Օհանյան

10. Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասն ուղղակի վաճառքով, ընդլայնման նպատակով Մարինե Ժորայի Աշրաֆյանին օտարելու մասին:

զեկ. Ա. Օհանյան

11. Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասն ուղղակի վաճառքով, ընդլայնման նպատակով Զորիկ Պետրոսի Բաբաջանյանին, Սոֆյա Պետրոսի Բաբաջանյանին , Մարինե Զորիկի Բաբաջանյանին , Պետրոս Զորիկի Բաբաջանյանին օտարելու մասին:

զեկ. Ա. Օհանյան

12. Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասն ուղղակի վաճառքով Յուրիկ Ավետիքի Անտինյանին օտարելու մասին:

զեկ. Ա. Օհանյան

13. Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասն ուղղակի վաճառքով Արմեն Սարգսի Գալոյանին օտարելու մասին:

զեկ. Ա. Օհանյան

14. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնքի ավագանու տասնմեկերորդ նստաշրջանի հերթական նիստի օրը սահմանելու մասին:

զեկ. Ս. Կոստանդյան

15. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնքի սեփականության գույքագրման փաստաթղթերում կատարված փոփոխությունները հաստատելու մասին:

զեկ. Կ. Շերմազանյան

ԸՆԹԱՑՔԸ՝

1. ԼՍԵՑԻՆ - ՀՀ Լոռու մարզի Փամբակ համայնքի ավագանու 2025 թվականի դեկտեմբերի 23-ի թիվ 142-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին հարցի նախագիծը:

- զեկուցեց Փամբակի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի առաջատար մասնագետ Կիմա Շերմազանյանը:

Զեկուցողը ներկայացրեց, որ առաջարկվող փոփոխություններով նախատեսվում է.

Եկամուտների գծով ավելացնել 51.219.100 դրամ՝ որպես բնապահպանական մասհանումներից համայնքներին հատկացվող սուբվենցիա:

Տնտեսական հարաբերություններում որպես հողի օտարում ավելացնել 30000000 դրամ:

Ծախսերի գծով՝

01.06.01՝ ընդհանուր բնույթի այլ ծառայություններ նախահաշվի, 4239 հոդվածում ավելացնել 3.000.000 դրամ՝ ընդհանուր բնաույթի այլ ծառայությունների համար: Նույն նախահաշվի 4269 հոդվածում ավելացնել 4.000.000 դրամ՝ հատուկ նպատակային նյութերի ձեռք բերման համար:

06.03.01՝ ջրամատակարարման նախահաշվի, 5134 հոդվածում ավելացնել 1.670.000 դրամ՝ Ազնվաձոր բնակավայրի խմելու ջրի արտաքին և ներքին ցանցի կառուցում սուբվենցիոն ծրագրի նախագծի կազմման համար:

06.04.01՝ փողոցային լուսավորության նախահաշվի, 5112 հոդվածում ավելացնել 22.000.000 դրամ՝ կայուն էներգիա հանուն Հայաստանում կլիմայակայուն համայնքային զարգացման ծրագրի շջանակներում իրականացվող աշխատանքների համար:

06.05.01՝ բնակարանային ֆոնդ նախահաշվի, 5111 հոդվածում ավելացնել 1.000.000 դրամ՝ Լեռնապատում այրված տան բնակիչներին կացարանով ապահովելու համար:

08.02.03՝ Մարգահովիտի ԿՄՄՀ-ի նախահաշվի, 4637 հոդվածում ավելացնել 1.000.000 դրամ դրամաշնորհ՝ Մարգահովիտի մանկապարտեզի երեխաների սննդի համար:

04.05.01՝ ճանապարհային տնտեսություն նախահաշվի, 5134 հոդվածում ավելացնել 6.080.000 դրամ՝ Վահագնի, Անտառամուտ, Փամբակ, Ձորագետ, Վահագնաձոր, Բազում և Մարգահովիտ բնակավայրերում ճանապարհների ասֆալտապատման և տուֆապատման 2027 թ-ի սուբվենցիոն ծրագրերի նախագծերի կազմման համար:

04.02.01՝ Գյուղատնտեսության նախահաշվի, 5121 հոդվածում ավելացնել 51.219.100 դրամ՝ բնապահպանական ծրագրով գյուղատնտեսական տեխնիկաներ և սարքավորումներ ձեռք բերելու համար:

Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ, կողմ՝ 11 դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0 ընդունվեց որոշում /կցվում է որոշում N 167-Ն/:

2. ԼՍԵՑԻՆ - ՀՀ Լոռու մարզի Փամբակ համայնքի բյուջեի կատարման 2026թ-ի III եռամսյակի կատարած ֆինանսական հաշվետվության մասին հարցի նախագիծը:

- զեկուցեց Փամբակի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի առաջատար մասնագետ Կիմա Շերմազանյանը:

Զեկուցողը ներկայացրեց, որ Փամբակ համայնքի 2026 թվականի բյուջեի երրորդ եռամսյակը կատարվել է.

ԵԿԱՆՈՒՏՆԵՐԻ ԳԾՈՎ՝

Փամբակ համայնքի 2026 թվականի բյուջեի երրորդ եռամսյակի եկամուտները նախատեսված 816546.0 հազ.դրամի դիմաց փաստացի կազմել են 662863.3 հազ. դրամ, կամ կատարողականը կազմել է 81.2 %: Նախորդ՝ 2025 թվականի համեմատությամբ եկամուտները ավել է կատարվել 90803.1 հազ. դրամով՝ կամ կատարողականը կազմել է 115.9%:

Վարչական մասի եկամուտները նախատեսված (պլանավորված) 699027.4 հազ. դրամի դիմաց փաստացի կատարվել է 578181.7 հազ դրամ՝ ապահովելով 82.7 % կատարողական: Նախորդ տարվա համեմատությամբ բյուջեի վարչական մասի եկամուտները ավել է կատարվել 27293.6 հազ. դրամով՝ կամ կատարողականը կազմել է 105.0%:

Ֆոնդային մասի եկամուտները նախատեսված (պլանավորված) 210126.9 հազ. դրամի դիմաց փաստացի մուտքը կազմել 84681.6 հազ. դրամ, կամ կատարողականը կազմել է 40.3% : Նախորդ տարվա համեմատությամբ բյուջեի ֆոնդային մասի եկամուտները ավել է գանձվել 63509.5 հազ. դրամով;
Սեփական եկամուտները նախատեսվել են 184512.0 հազ. դրամ: Փաստացի հավաքագրումը կազմել 66666.7 հազ. դրամ, կատարողականը կազմելով 36.1%: 2025-ի համեմատությամբ եկամուտները պակաս է գանձվել 34431.4 հազ. դրամով: Նախորդ տարվա համեմատությամբ կատարողականը կազմել է 65.9 %:

Ներկայացվում է Փամբակ համայնքի 2026 թվականի բյուջեի երրորդ եռամսյակի սեփական եկամուտների վերլուծությունը ըստ հարկատեսակների /եկամտատեսակների/

Գույքահարկի ապառք համայնքների վարչական տարածքներում գտնվող շենքերի և շինությունների մասով – երրորդ եռամսյակում նախատեսվել է 70.0 հազ. դրամ, սակայն փաստացի հավաքագրումը կազմել 4.7 հազ. դրամ, կատարողականը կազմելով 6.7%:

Հողի հարկի ապառքի մասով – երրորդ եռամսյակում պլան նախատեսվել է 1000.0 հազ. դրամ, սակայն փաստացի հավաքագրումը կազմել է 1312.1 հազ. դրամ, կատարողականը կազմելով 131.2%:

Անշարժ գույքի հարկի մասով – նախատեսված 46427.4 հազ. դրամի նկատմամբ փաստացի հավաքագրումը կազմել է 15364.5 հազ. դրամ, կատարողականը կազմելով 33.1 %:

Գույքահարկ փոխադրամիջոցների մասով – նախատեսված 73899.0 հազ. դրամի նկատմամբ փաստացի հավաքագրումը կազմել է 30713.1 հազ. դրամ, կատարողականը կազմելով 41.6 %:

Տեղական տուրքերի մասով – նախատեսված 7950.0 հազ. դրամի նկատմամբ փաստացի մուտքերը կազմել են 10725.5 հազ. դրամ, կատարողականը կազմել է 134.9%:

Այլ եկամուտների մասով – նախատեսված 55165.4 հազ. դրամի նկատմամբ փաստացի հավաքագրումը կազմել է 48546.9 հազ. դրամ, կատարողականը կազմելով 88.0 %:
Պաշտոնական դրամաշնորհներ՝ դոտացիաներ.
Պաշտոնական դրամաշնորհների՝ դոտացիայի մասով – 2026թվականի երրորդ եռամսյակի համար նախատեսված 514515.4 հազ. դրամի դիմաց փաստացի մուտքերը կազմել են 511515.0 հազ. դրամ, կատարողականը կազմել է 99.4%: Նախորդ տարվա համեմատությամբ ավել է կատարվել 61725.0 հազ. դրամով, կամ նախորդ տարվա համեմատությամբ կատարվել է 113.7 %-ով: 2026 թվականի երրորդ եռամսյակի ընթացքում վարչական բյուջեի պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե փաստացի հատկացումներ չեն եղել:
ԾԱԽՍԵՐԻ ԳԾՈՎ՝
Փամբակ համայնքի 2026 թվականի բյուջեի երրորդ եռամսյակի միջոցների հաշվին իրականացված ընդհանուր ծախսերը նախատեսված 1110793.3 հազ. դրամի դիմաց փաստացի կատարվել է 576097.6 հազ. դրամով, կամ կատարողականը կազմել է 51.9%: Նախորդ՝ 2025 թվականի համեմատությամբ ծախսերը պակաս են կատարվել 4137.2 հազ. դրամով՝ կամ նախորդ տարվա համեմատությամբ կատարվել է 99.3%:

Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:
Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ, կողմ՝ 11 դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0 ընդունվեց որոշում /կցվում է որոշում N 168-Ա/:

3. ԼՍԵՑԻՆ - Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակի համայնքապետարանի աշխատակազմի կառուցվածքը, համայնքապետարանի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին հարցի նախագիծը:
- զեկուցեց Փամբակի համայնքապետարանի աշխատակազմի ղեկավար Ռաիսա Մինասյանը:
Զեկուցողը առաջարկեց հաստատել ՀՀ Լոռու մարզի Փամբակի համայնքապետարանի աշխատակազմի կառուցվածքը, աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի և ուժը կորցրած ճանաչել Փամբակ համայնքի ավագանու 16.09.2026 թվականի N 147-Ա որոշումը: Գերմանական միջազգային կազմակերպության և Փամբակի համայնքապետարանի համագործակցությամբ իրականացված «Լավ կառավարում հանուն տեղական զարգացման հարավային Կովկասում» ծրագրի շրջանակներում համայնքը ձեռք է բերել 2-րդ ավտոբուսը: Առաջարկվող փոփոխություններով նախատեսվում է հաստիքացուցակում ավելացնել 1 դրույք ավտոբուսի վարորդի հաստիք և 0.5 դրույք Ազնվաձոր գյուղի վարչական շենքի բակապահի հաստիք:
Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:
Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:
Քվեարկությամբ, կողմ՝ 11, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0, ընդունվեց որոշում /կցվում է որոշում N 169-Ա/:

4. ԼՍԵՑԻՆ - Փամբակ համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերը վարձակալության իրավունքներով տրամադրելուն համաձայնություն տալու, մեկնարկային գները, մրցույթի պայմանները հաստատելու մասին հարցի նախագիծը:
- զեկուցեց Փամբակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի պետ Արտակ Օհանյանը:

Զեկուցողը առաջարկեց տալ համաձայնություն նախագծով ներկայացված 19 լոտ հողամասերին 3 լոտ ավելացնելուն և Փամբակ համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող 22 լոտ հողամասերը վարձակալության իրավունքով տրամադրելուն:

Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:
Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:
Քվեարկությամբ, կողմ՝ 11, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0, ընդունվեց որոշում /կցվում է որոշում N 170-Ա/:

5. ԼՍԵՑԻՆ - Փամբակ համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերն աճուրդ վաճառքով օտարելուն համաձայնություն տալու, մեկնարկային գները և աճուրդի պայմանները հաստատելու մասին հարցի նախագիծը:

- զեկուցեց Փամբակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի պետ Արտակ Օհանյանը:

Զեկուցողը առաջարկեց տալ համաձայնություն նախագծով ներկայացված 5 լոտ հողամասերից 1 լոտը հանելու և էլեկտրոնային աճուրդով 4 լոտ հողամասերը օտարելուն: Եթե էլեկտրոնային աճուրդը չի կայանում, ապա լոտի մեկնարկային գինը սահմանվում է հետևյալ կերպ՝ համայնքային անշարժ գույքի օտարման դեպքում՝ երկրորդ էլեկտրոնային աճուրդի ժամանակ մեկնարկային գինը սահմանվում է գնահատված արժեքի 85 տոկոսի չափով, չվաճառվելու դեպքում՝ երրորդ և հերթական էլեկտրոնային աճուրդի ժամանակ մեկնարկային գինը սահմանվում է գնահատված արժեքի 70 տոկոսի չափով:

Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ, կողմ՝ 11, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0, ընդունվեց որոշում /կցվում է որոշում N 171-Ա/:

6. ԼՍԵՑԻՆ - Համայնքային սեփականություն հանդիսացող Փամբակ համայնքի գյուղ Մարգահովիտ 3-րդ փողոց 32 բաղնիք հասցեում գտնվող անշարժ գույքը վարձակալության իրավունքով տրամադրելու մասին հարցի նախագիծը:

- զեկուցեց Փամբակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի պետ Արտակ Օհանյանը:

Զեկուցողը առաջարկեց հաշվի առնելով Փամբակ համայնքի ղեկավարի կողմից ներկայացված առաջարկությունը՝ Ռոման Հարությունի Սելիմյանին տարածք հատկացնելու վերաբերյալ, տալ համաձայնություն համայնքային սեփականություն հանդիսացող Փամբակ համայնքի Մարգահովիտ 3-րդ փողոց 32 բաղնիք հասցեում գտնվող 06-070-0071-0005 կադաստրային ծածկագրով 0,03853 հա հողամասը և 06-070-0071-0005-001 կադաստրային ծածկագրով 228,65 ք/մ մակերեսով բաղնիքի շենքը 50 տարի ժամկետով, վարձակալության իրավունքով Ռոման Հարությունի Սելիմյանին վարձակալության տրամադրելուն: Անշարժ գույքի վարձակալության ընդհանուր արժեքը մեկ տարվա համար սահմանել 80000 /ութսուն հազար/ ՀՀ դրամ: Առաջարկել համայնքի ղեկավարին Ռոման Հարությունի Սելիմյանի հետ կնքել անշարժ գույքի վարձակալության պայմանագիր:

Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ, կողմ՝ 11, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0, ընդունվեց որոշում /կցվում է որոշում N 172-Ա/:

7. ԼՍԵՑԻՆ - Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասն ուղղակի վաճառքով, ընդլայնման նպատակով Աշոտ Վասիլի Թունյանին օտարելու մասին հարցի նախագիծը:
- զեկուցեց Փամբակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի պետ Արտակ Օհանյանը:

Զեկուցողը առաջարկեց հաշվի առնելով Աշոտ Վասիլի Թունյանի դիմումը, տալ համաձայնություն նրան սեփականության իրավունքով պատկանող Փամբակ համայնքի Ազնվաձոր բնակավայրում գտնվող 06-010-0031-0002 կադաստրային ծածկագրով 0,2073 հա հողամասին կից գտնվող 06-010-0031-0010 կադաստրային ծածկագրով 0,02478 հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասն ուղղակի վաճառքով, ընդլայնման նպատակով Աշոտ Վասիլի Թունյանին օտարելուն: Հողամասի վաճառքի գին սահմանել կադաստրային արժեքի չափով՝ 83 410 (ութսուներեք հազար չորս հարյուր տաս) ՀՀ դրամ:

Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:
Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:
Քվեարկությամբ, կողմ՝ 11, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0, ընդունվեց որոշում /կցվում է որոշում N 173-Ա/:

8. ԼՍԵՑԻՆ - Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասն ուղղակի վաճառքով, ընդլայնման նպատակով Հայկազ Սամսոնի Ներկարարյանին օտարելու մասին հարցի նախագիծը:
- զեկուցեց Փամբակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի պետ Արտակ Օհանյանը:

Զեկուցողը առաջարկեց հաշվի առնելով Հայկազ Սամսոնի Ներկարարյանի դիմումը, տալ համաձայնություն Հայկազ Սամսոնի Ներկարարյանին սեփականության իրավունքով պատկանող Փամբակ համայնքի Լեռնապատ բնակավայրում գտնվող 06-041-0022-0048 կադաստրային ծածկագրով 0,04192 հա հողամասին կից գտնվող 06-041-0022-0064 կադաստրային ծածկագրով 0,00961 հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասն ուղղակի վաճառքով Հայկազ Սամսոնի Ներկարարյանին օտարելուն: Հողամասի վաճառքի գին սահմանել կադաստրային արժեքի չափով՝ 32 350 (երեսուներկու հազար երեք հարյուր հիսուն) ՀՀ դրամ:

Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:
Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:
Քվեարկությամբ, կողմ՝ 11, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0, ընդունվեց որոշում /կցվում է որոշում N 174-Ա/:

9. ԼՍԵՑԻՆ - Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասն ուղղակի վաճառքով, ընդլայնման նպատակով Մարինե Ժորայի Աշրաֆյանին օտարելու մասին հարցի նախագիծը:

- զեկուցեց Փամբակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի պետ Արտակ Օհանյանը:

Զեկուցողը առաջարկեց հաշվի առնելով Մարինե Ժորայի Աշրաֆյանի դիմումը, տալ համաձայնություն նրան սեփականության իրավունքով պատկանող Փամբակ համայնքի Լեռնապատ բնակավայրում գտնվող 06-041-0022-0063 կադաստրային ծածկագրով 0,24359 հա հողամասին կից գտնվող 06-041-0022-0065 կադաստրային ծածկագրով 0,146726 հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասն ուղղակի վաճառքով Մարինե Ժորայի Աշրաֆյանին օտարելուն: Հողամասի վաճառքի գին սահմանել կադաստրային արժեքի չափով՝ 493880 (չորս հարյուր ինսուներեք հազար ութ հարյուր ութսուն) ՀՀ դրամ:

Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ, կողմ՝ 11, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0, ընդունվեց որոշում /կցվում է որոշում N 175-Ա/:

10. ԼՍԵՑԻՆ - Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասն ուղղակի վաճառքով, ընդլայնման նպատակով Զորիկ Պետրոսի Բաբաջանյանին, Սոֆյա Պետրոսի Բաբաջանյանին, Մարինե Զորիկի Բաբաջանյանին, Պետրոս Զորիկի Բաբաջանյանին օտարելու մասին հարցի նախագիծը:

- զեկուցեց Փամբակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի պետ Արտակ Օհանյանը:

Զեկուցողը առաջարկեց հաշվի առնելով Զորիկ Պետրոսի Բաբաջանյանի, Սոֆյա Պետրոսի Բաբաջանյանի, Մարինե Զորիկի Բաբաջանյանի և Պետրոս Զորիկի Բաբաջանյանի դիմումը, տալ համաձայնություն նրանց սեփականության իրավունքով պատկանող Փամբակ համայնքի Բազում բնակավայրում գտնվող 06-023-0036-0006 կադաստրային ծածկագրով 0,0558 հա հողամասին կից գտնվող 06-023-0036-0010 կադաստրային ծածկագրով 0,03197 հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասն ուղղակի վաճառքով նրանց օտարելուն: Հողամասի վաճառքի գին սահմանել կադաստրային արժեքի չափով՝ 164582 (մեկ հարյուր վաթսունչորս հազար հինգ հարյուր ութսուներկու) ՀՀ դրամ:

Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ, կողմ՝ 11, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0, ընդունվեց որոշում /կցվում է որոշում N 176-Ա/:

11. ԼՍԵՑԻՆ - Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասն ուղղակի վաճառքով Յուրիկ Ավետիքի Անտինյանին օտարելու մասին հարցի նախագիծը:

- զեկուցեց Փամբակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի պետ Արտակ Օհանյանը:

Զեկուցողը առաջարկեց հաշվի առնելով Յուրիկ Ավետիքի Անտինյանի դիմումը, տալ համաձայնություն նրա կողմից վարձակալած, Փամբակ համայնքի Մարգահովիտ գյուղի վարչական տարածքում գտնվող 06-070-0339-0018 կադաստրային ծածկագրով 2.80629 հա համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նպատակային նշանակության, 1-ին կարգի խոտհարքը գնման նախապատվությամբ, ուղղակի վաճառքով նրան օտարելուն: Հողամասի վաճառքի գին սահմանել համաձայն շուկայական գնահատության՝ 4 200 000 (չորս մլն երկու հարյուր հազար) ՀՀ դրամ:

Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ, կողմ՝ 11, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0, ընդունվեց որոշում /կցվում է որոշում N 177-Ա/:

12. ԼՍԵՑԻՆ - Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասն ուղղակի վաճառքով Արմեն Սարգսի Գալոյանին օտարելու մասին հարցի նախագիծը:

- զեկուցեց Փամբակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի պետ Արտակ Օհանյանը:

Զեկուցողը առաջարկեց հաշվի առնելով Արմեն Սարգսի Գալոյանի դիմումը, տալ համաձայնություն նրա կողմից վարձակալած, Փամբակ համայնքի Վահագնի գյուղի վարչական տարածքում գտնվող 06-103-0061-0006 կադաստրային ծածկագրով 0,01273 հա համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նպատակային նշանակության, այլ հողատեսքը գնման նախապատվությամբ, ուղղակի վաճառքով նրան օտարելուն: Հողամասի վաճառքի գին սահմանել համաձայն շուկայական գնահատության՝ 620 000 (վեց հարյուր քսան հազար) ՀՀ դրամ:

Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ, կողմ՝ 11, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0, ընդունվեց որոշում /կցվում է որոշում N 178-Ա/:

13. ԼՍԵՑԻՆ - Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնքի սեփականության գույքագրման փաստաթղթերում կատարված փոփոխությունները հաստատելու մասին հարցի նախագիծը:

- զեկուցեց Փամբակի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի առաջատար մասնագետ Կիմա Շերմազանյանը:

Զեկուցողը ներկայացրեց, որ 2026թ. հոկտեմբեր ամսվա ընթացքում Գերմանական միջազգային կազմակերպության և Փամբակի համայնքապետարանի համագործակցությամբ իրականացված «Լավ կառավարում հանուն տեղական զարգացման հարավային Կովկասում» ծրագրի շրջանակներում համայնքը ձեռք է բերել 15940000 ՀՀ դրամ արժողությամբ JAC R0076 մակնիշի 2-րդ ավտոբուսը, որը անհրաժեշտ է ներառել համայնքի հիմնական միջոցի ցանկում:

Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ, կողմ՝ 11, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0, ընդունվեց որոշում /կցվում է որոշում N 179-Ա/:

14. ԼՍԵՑԻՆ - Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնքի ավագանու տասնմեկերորդ նստաշրջանի հերթական նիստի օրը սահմանելու մասին հարցի նախագիծը:

- Նիստը վարողն առաջարկեց քվեարկությամբ որոշել Փամբակ համայնքի ավագանու տասնմեկերորդ նստաշրջանի հերթական նիստի օրը: Համայնքի ղեկավարն առաջարկեց հաջորդ նիստի օր նշանակել 2026 թվականի նոյեմբերի 19-ը՝ նախագծով ներկայացված նոյեմբերի 17-ի փոխարեն: Առաջարկը դրվեց քվեարկության:

Քվեարկությամբ, կողմ՝ 11, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0 ընդունվեց որոշում /կցվում է որոշում N 180-Ա/:

Փամբակ համայնքի ավագանու տասնմեկերորդ նստաշրջանի հերթական նիստի օր նշանակվեց 2026 թվականի նոյեմբերի 19-ը: Նիստի սկիզբ սահմանվեց ժամը 14.00-ն:

Օրակարգի հարցերը սպառվեցին, Ս. Կոստանդյանը նիստը հայտարարեց փակված:

ՆԻՍՏԻՆ ՄԱՍՆԱԿՑԱԾ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

ՍՈՒՐԵՆ ԿՈՍՏԱՆԴՅԱՆ _____

ՍԱՄՎԵԼ ԱՆԱՆՅԱՆ _____

ԱՇՈՏ ԱՆՏԻՆՅԱՆ _____

ԷՄՄԱ ԳԱՍՊԱՐՅԱՆ _____

ՊԱՎԼԻԿ ՊԱՊԻՆՅԱՆ _____

ԱՐԱՅԻԿ ՔՈՉԱՐՅԱՆ _____

ԳՐԻԳՈՐ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ _____

ՇՈՒՇԱՆԻԿ ՀԱԿՈԲՅԱՆ _____

ՍԵՐՅՈԺԱ ՍԱՐԴԱՐՅԱՆ _____

ՍԵՐՅՈԺԱ ԵՍԱՅԱՆ _____

ԱԼՎԱՐԴ ԱՎԵՏԻՔՅԱՆ _____

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍՈՒՐԵՆ ԿՈՍՏԱՆԴՅԱՆ

ԱՐՁԱՆԱԳՐՈՂ՝ ՌԱԻՍԱ ՄԻՆԱՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Փամբակ, +374 98393131, info@pambak.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

14 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2026թվականի N 166-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2026Թ-Ի ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 14-Ի ԹԻՎ 12 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 65-րդ հոդվածի դրույթներով, Փամբակ համայնքի ավագանին՝ ***որոշում է.***

Հաստատել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնքի ավագանու 2026թ-ի հոկտեմբերի 14-ի թիվ 12 հերթական նիստի օրակարգը:

ՕՐԱԿԱՐԳ

1. ՀՀ Լոռու մարզի Փամբակ համայնքի ավագանու 2026թ-ի հոկտեմբերի 14-իթիվ 12 հերթական նիստի օրակարգը հաստատելու մասին:
2. ՀՀ Լոռու մարզի Փամբակ համայնքի ավագանու 2025 թվականի դեկտեմբերի 23-ի թիվ 142-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:
3. ՀՀ Լոռու մարզի Փամբակ համայնքի բյուջեի կատարման 2026թ-ի III եռամսյակի կատարած ֆինանսական հաշվետվության մասին:
4. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակի համայնքապետարանի աշխատակազմի կառուցվածքը, համայնքապետարանի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին:
5. Փամբակ համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերը վարձակալության իրավունքներով տրամադրելուն համաձայնություն տալու, մեկնարկային գները, մրցույթի պայմանները հաստատելու մասին:
6. Փամբակ համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերն աճուրդ վաճառքով օտարելուն համաձայնություն տալու, մեկնարկային գները և աճուրդի պայմանները հաստատելու մասին:
7. Համայնքային սեփականություն հանդիսացող Փամբակ համայնքի գյուղ Մարգահովիտ 3-րդ փողոց 32 բաղնիք հասցեում գտնվող անշարժ գույքը վարձակալության իրավունքով տրամադրելու մասին:

8. Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասն ուղղակի վաճառքով, ընդլայնման նպատակով Աշոտ Վասիլի Թունյանին օտարելու մասին:
9. Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասն ուղղակի վաճառքով, ընդլայնման նպատակով Հայկազ Սամսոնի Ներկարարյանին օտարելու մասին:
10. Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասն ուղղակի վաճառքով, ընդլայնման նպատակով Մարինե Ժորայի Աշրաֆյանին օտարելու մասին:
11. Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասն ուղղակի վաճառքով, ընդլայնման նպատակով Զորիկ Պետրոսի Բաբաջանյանին, Սոֆյա Պետրոսի Բաբաջանյանին, Մարինե Զորիկի Բաբաջանյանին, Պետրոս Զորիկի Բաբաջանյանին օտարելու մասին:
12. Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասն ուղղակի վաճառքով Յուրիկ Ավետիքի Անտինյանին օտարելու մասին:
13. Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասն ուղղակի վաճառքով Արմեն Սարգսի Գալոյանին օտարելու մասին:
14. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնքի ավագանու տասնմեկերորդ նստաշրջանի հերթական նիստի օրը սահմանելու մասին:
15. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնքի սեփականության գույքագրման փաստաթղթերում կատարված փոփոխությունները հաստատելու մասին:

Կողմ -11 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՍՈՒՐԵՆ ԿՈՍՏԱՆԴՅԱՆ
ՍԱՄՎԵԼ ԱՆԱՆՅԱՆ
ԷՄՄԱ ԳԱՍՊԱՐՅԱՆ
ՊԱՎԼԻԿ ՊԱՊԻՆՅԱՆ
ԱՇՈՏ ԱՆՏԻՆՅԱՆ
ՍԵՐՅՈԺԱ ՍԱՐԴԱՐՅԱՆ
ԱՐԱՅԻԿ ՔՈՉԱՐՅԱՆ
ԱԼՎԱՐԴ ԱՎԵՏԻՔՅԱՆ
ՇՈՒՇԱՆԻԿ ՀԱԿՈԲՅԱՆ
ԳՐԻԳՈՐ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ
ՍԵՐՅՈԺԱ ԵՍԱՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՍՈՒՐԵՆ ԿՈՍՏԱՆԴՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Փամբակ, +374 98393131, info@pambak.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

14 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2026թվականի N 167-Ն

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 23-Ի ԹԻՎ 142-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական Ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի, «Բյուջետային համակարգի մասին» օրենքի 32-րդ հոդվածի 3-րդ կետի և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի դրույթներով՝ Փամբակ համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնքի ավագանու 2025 թվականի դեկտեմբերի 23-ի «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնքի 2026 թվականի բյուջեն հաստատելու մասին» թիվ 142-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1) Որոշմամբ հաստատված համայնքի բյուջեի եկամուտների մասում կատարել փոփոխություն՝ համաձայն հատված 1-ի:

2) Որոշմամբ հաստատված համայնքի բյուջեի ծախսերում՝ ըստ գործառնական դասակարգման, կատարել փոփոխություն՝ համաձայն հատված 2-ի:

3) Որոշմամբ հաստատված համայնքի բյուջեի ծախսերում՝ ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման, կատարել փոփոխություն համաձայն հատված 3-ի:

4) Որոշմամբ հաստատված համայնքի բյուջեի միջոցների տարեվերջի հավելուրդում կամ դեֆիցիտում /պակասուրդում/ կատարել փոփոխություն համաձայն հատված 4-ի:

5) Որոշմամբ հաստատված համայնքի բյուջեի հավելուրդի օգտագործման ուղղություններում կամ դեֆիցիտի (պակասուրդի) ֆինանսավորման աղբյուրներում կատարել փոփոխություն համաձայն հատված 5-ի:

6) Որոշմամբ հաստատված համայնքի բյուջեի ծախսերը՝ ըստ բյուջետային ծախսերի գործառնական և տնտեսագիտական դասակարգման, կատարել փոփոխություն համաձայն հատված 6-ի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ -11 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՍՈՒՐԵՆ ԿՈՍՏԱՆԴՅԱՆ

ՍԱՄՎԵԼ ԱՆԱՆՅԱՆ
ԷՄՄԱ ԳԱՍՊԱՐՅԱՆ
ՊԱՎԼԻԿ ՊԱՊԻՆՅԱՆ
ԱՇՈՏ ԱՆՏԻՆՅԱՆ
ՍԵՐՅՈԺԱ ՍԱՐԴԱՐՅԱՆ
ԱՐԱՅԻԿ ՔՈՉԱՐՅԱՆ
ԱԼՎԱՐԴ ԱՎԵՏԻՔՅԱՆ
ՇՈՒՇԱՆԻԿ ՀԱԿՈԲՅԱՆ
ԳՐԻԳՈՐ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ
ՍԵՐՅՈԺԱ ԵՍԱՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՍՈՒՐԵՆ ԿՈՍՏԱՆԴՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Փամբակ, +374 98393131, info@pambak.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

14 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2026թվականի N 168-Ա

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ 2026Թ-Ի III ԵՌԱՄՍՅԱԿԻ ԿԱՏԱՐԱԾ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական Ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի դրույթներով՝ Փամբակ համայնքի ավագանին ***որոշում է.***

Ընդունել ի գիտություն ՀՀ Լոռու մարզի Փամբակ համայնքի 2026թ-ի բյուջեի 9 ամսվա կատարման վերաբերյալ հաղորդումը:

Կողմ -11 Դեմ -0 Ձեռնպահ -0
ՍՈՒՐԵՆ ԿՈՍՏԱՆԴՅԱՆ
ՍԱՄՎԵԼ ԱՆԱՆՅԱՆ
ԷՄՄԱ ԳԱՍՊԱՐՅԱՆ
ՊԱՎԼԻԿ ՊԱՊԻՆՅԱՆ
ԱՇՈՏ ԱՆՏԻՆՅԱՆ
ՍԵՐՅՈԺԱ ՍԱՐԴԱՐՅԱՆ
ԱՐԱՅԻԿ ՔՈՉԱՐՅԱՆ
ԱԼՎԱՐԴ ԱՎԵՏԻՔՅԱՆ
ՇՈՒՇԱՆԻԿ ՀԱԿՈԲՅԱՆ
ԳՐԻԳՈՐ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ
ՍԵՐՅՈԺԱ ԵՍԱՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍՈՒՐԵՆ ԿՈՍՏԱՆԴՅԱՆ

Հավելված
Փամբակ համայնքի ավագանու
2026թ-ի հոկտեմբերի 14-ի թիվ 168-Ա որոշման

Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵՐՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Փամբակ համայնքի 2026 թվականի բյուջեի երրորդ եռամսյակը կատարվել է.

ԵԿԱՆՈՒՏՆԵՐԻ ԳԾՈՎ՝

Փամբակ համայնքի 2026 թվականի բյուջեի երրորդ եռամսյակի եկամուտները նախատեսված 816546.0 հազ.դրամի դիմաց փաստացի կազմել են 662863.3 հազ. դրամ, կամ կատարողականը կազմել է 81.2 %: Նախորդ՝ 2025 թվականի համեմատությամբ եկամուտները ավել է կատարվել 90803.1 հազ. դրամով՝ կամ կատարողականը կազմել է 115.9%:

Վարչական մասի եկամուտները նախատեսված (պլանավորված) 699027.4 հազ. դրամի դիմաց փաստացի կատարվել է 578181.7 հազ դրամ՝ ապահովելով 82.7 % կատարողական: Նախորդ տարվա համեմատությամբ բյուջեի վարչական մասի եկամուտները ավել է կատարվել 27293.6 հազ. դրամով՝ կամ կատարողականը կազմել է 105.0%:

Ֆոնդային մասի եկամուտները նախատեսված (պլանավորված) 210126.9 հազ. դրամի դիմաց փաստացի մուտքը կազմել 84681.6 հազ. դրամ, կամ կատարողականը կազմել է 40.3% : Նախորդ տարվա համեմատությամբ բյուջեի ֆոնդային մասի եկամուտները ավել է գանձվել 63509.5 հազ. դրամով;

2026 թվականի բյուջեի երրորդ եռամսյակի սեփական եկամուտները նախատեսվել են 184512.0 հազ. դրամ: Փաստացի հավաքագրումը կազմել 66666.7 հազ. դրամ, կատարողականը կազմելով 36.1%: 2025-ի համեմատությամբ եկամուտները պակաս է գանձվել 34431.4 հազ. դրամով: Նախորդ տարվա համեմատությամբ կամ կատարողականը կազմել է 65.9 % :

Ներկայացվում է Փամբակ համայնքի 2026 թվականի բյուջեի երրորդ եռամսյակի սեփական եկամուտների վերլուծությունը ըստ հարկատեսակների /եկամտատեսակների/

Գույքահարկի ապառք համայնքների վարչական տարածքներում գտնվող շենքերի և շինությունների մասով – երրորդ եռամսյակում նախատեսվել են 70.0 հազ. դրամ, սակայն փաստացի հավաքագրումը կազմել 4.7 հազ. դրամ, կատարողականը կազմելով 6.7%: Նախորդ տարվա համեմատությամբ պակաս է գանձվել 62. 6 հազ. դրամ,կամ նախորդ տարվա համեմատությամբ կատարվել է 7 %-ով:

Հողի հարկի ապառքի մասով – երրորդ եռամսյակում պլան նախատեսվել են 1000.0 հազ. դրամ, սակայն փաստացի հավաքագրումը կազմել է 1312.1 հազ. դրամ, կատարողականը կազմելով 131.2%: Նախորդ տարվա համեմատությամբ պակաս է

գանձվել 821.7 հազ. դրամ, կամ նախորդ տարվա համեմատությամբ կատարվել է 61.5 %-ով:

Անշարժ գույքի հարկի մասով – երրորդ եռամսյակի համար նախատեսված 46427.4 հազ. դրամի նկատմամբ փաստացի հավաքագրումը կազմել է 15364.5 հազ. դրամ, կատարողականը կազմելով 33.1 %: Նախորդ տարվա համեմատությամբ ավել է գանձվել 79.9 հազ. դրամ, կամ նախորդ տարվա համեմատությամբ կատարվել է 100.5 %-ով:

Գույքահարկ փոխադրամիջոցների մասով – երրորդ եռամսյակի համար նախատեսված 73899.0 հազ. դրամի նկատմամբ փաստացի հավաքագրումը կազմել է 30713.1 հազ. դրամ, կատարողականը կազմելով 41.6 %: Նախորդ տարվա համեմատությամբ ավել է գանձվել 399.3 հազ. դրամ,կամ նախորդ տարվա համեմատությամբ կատարվել է 101.3 %-ով:

Տեղական տուրքերի մասով – երրորդ եռամսյակի համար նախատեսված 7950.0 հազ. դրամի նկատմամբ փաստացի մուտքերը կազմել են 10725.5 հազ. դրամ, կատարողականը կազմել է 134.9%: Նախորդ տարվա համեմատությամբ պակաս է գանձվել 2870.8 հազ. դրամ, նախորդ տարվա համեմատությամբ կատարվել է 136.5/% -ով:

Այլ եկամուտների մասով –երրորդ եռամսյակի համար նախատեսված 55165.4 հազ. դրամի նկատմամբ փաստացի հավաքագրումը կազմել է 48546.9 հազ. դրամ, կատարողականը կազմելով 88.0 %:

Որից՝

1) Համայնքի սեփականություն համարվող հողերի վարձավճարների մասով –երրորդ եռամսյակի համար նախատեսված 11459.3 հազ. դրամի նկատմամբ փաստացի մուտքերը կազմել են 6587.0 հազ. դրամ, կատարողականը կազմել է 57.5%: Նախորդ տարվա համեմատությամբ ավել է գանձվել 1185.6 հազ. դրամ, կամ նախորդ տարվա համեմատությամբ կատարվել է 121.9 %-ով:

2) Այլ գույքի վարձակալության մասով – երրորդ եռամսյակի համար նախատեսված 810.0 հազ. դրամի նկատմամբ փաստացի մուտքերը կազմել են 722.9 հազ. դրամ, կատարողականը կազմել է 89.2 %: Նախորդ տարվա համեմատությամբ պակաս է գանձվել 69.3 դրամ, կամ նախորդ տարվա համեմատությամբ կատարվել է 91.3 %-ով:

3) Տեղական վճարների մասով –երրորդ եռամսյակի համար նախատեսված 26100.0 հազ. դրամի նկատմամբ փաստացի մուտքերը կազմել են 15454.5 հազ. դրամ, կատարողականը կազմել է 59.2 %: Նախորդ տարվա համեմատությամբ ավել է գանձվել 1263.4 հազ. դրամ, կամ նախորդ տարվա համեմատությամբ կատարվել է 108.9 %-ով:

4) Համայնքի վարչական տարածքում ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների օրինականացման համար վճարների մասով – երրորդ եռամսյակի համար նախատեսված 4000.0 հազ. դրամի նկատմամբ փաստացի մուտքերը կազմել են2860.9 հազ. դրամ, կատարողականը կազմել է 71.5 %: Նախորդ տարվա

համեմատությամբ պակաս է գանձվել 1810.9 հազ. դրամ, կամ նախորդ տարվա համեմատությամբ կատարվել է 61.2 %-ով:

5) Համայնքի բյուջե մուտքագրվող այլ կատեգորիաներում չդասակարգված կապիտալ տրանսֆերտների (նվիրատվություններ) մասով – երրորդ եռամսյակի համար նախատեսված 50000.0 հազ. դրամի նկատմամբ փաստացի մուտքեր կազմել են 40 000.0 հազ. դրամ, կամ կատարողականը կազմել է 80.0 %: Նախորդ տարվա համեմատությամբ ավել է գանձվել 30067.0 հազ. դրամ, կամ նախորդ տարվա համեմատությամբ կատարվել է 402.7 %-ով:

